

5567

321.8

h-85

1920

ԱՊՐԻԼՅԱՆ ՍՈՍՈՒՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅԻՆ  
ԻՃՆՆՆՈՒԹԻՒՆ:

321. 3'  
Ի

„Պրոխարենե բյար երկրների  
միացե՛լ.“

Պ. Մ. ԻՎԱՆՈՎ.

ԻՆՉ Է ԱՐԵԼ

Խորհրդային Իշխանութիւնը

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ.

Գրին է 10 բուրգի

Քարգ. Գ. Տ. Ք.

ԱՊՐԻԼՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

Բազմ. 1920 թ.

321.8  
Ի-85

издана в Азербайджанской Центропечати.

010

### ԲԱՄԲԱՍԱՆՔԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻԶԽԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

Շատ են խօսում Սովետական Իշխանութեան մասին, որ նա մեղաւոր է այս կամ այն բանի մէջ: Մեղազրուում են, որ Խորհրդային Իշխանութիւնը անընդունակ է կանոնաւոր գործ անելու: Հաց չկայ.—ուրեմն մեղաւորը Խորհրդային Իշխանութիւնն է, որ չի կարողանում կերակրել բոլորին: Երկաթուղիները լաւ չեն գործում. դարձեալ Խորհրդային Իշխանութեանն են մեղազրուում և օրինակ են բերում, որ ցարի ժամանակ աւելի կարգ ու կանոն էր տիրում:

Լուր են տարածում, որ Խորհրդային Իշխանութիւնը արգելում է Աստուծոյ հաւատալը. եկեղեցական պսակը ու զանգահարութիւնը, և ոչնչացնում է սրբերի պատկերները:

Անհնար է բոլոր ասկէկոսները մի առ մի թելի:

Իսկ երբ հարց ես տալիս, թէ ի՞նչով է վատ Խորհրդային Իշխանութիւնը. խօսողն էլ չի կարողանում պատասխանել:

Ինչքան ասես հայհոյում են Խորհրդային Իշխանութեանը: Հարցնում ես,—ինչ կարգեր է ուղում մտցնել Խորհրդային Իշխանութիւնը, և ո՞վ է նրան խանգարում սկսած գործը առաջ տանելու,—այդ հարցին արդէն որոշ և տեղին պատասխան ոչ ոքից չենք լսում:

Այդ բոլորն առիթ է տալիս մեզ մի առ մի պատմելու Խորհրդային Իշխանութեան կատարած գործը:

Ի՞նչու է նա այդպէս կոչւում. այդ Իշխանութիւնը ո՞ւմ օգտին է աշխտում Ռուսաստանում կարգը վերականգնելու, ի՞նչ է արել նա մինչև հիմա, և ի՞նչու դեռ շատ բաներ չի կարողացել անել, որ բանւորը հնարաւորութիւն ունենայ այդ երկրում լաւ և հանգիստ ապրելու:

Երբ այդ բոլոր հարցերին կպատասխանենք, այն ժամանակ

321.8  
Ի-85  
մ

պարզ կլինի ամենքի համար, որ իզուր են Խորհրդային Իշխանութեանը բամբասում:

Մենք հասկանում ենք մեզ բամբասող թշնամիների միտքը. նորա ուղում են դա՛ն նստեցնել նախկին ցարին, առաջ քաշել կալածատէրին, Ֆարբիկանաին ու վաճառականին, որ առաջւայ նման իրենց ճանկերում խեղտեն գիւղացուն ու բանւորին:

1856  
2562  
9001

### ԲԱՆԻՈՐ-ԳԻՒՂԱՅԻՆ ԻԶԽԱՆՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՎԵՐՊՈՒԹԻՒՆԸ.

Երբ Խորհրդային Իշխանութիւնը հաստատեց մեր երկրում, երկու տարին չըրացած, շատերը մոռացան, որ 1917 թ. հոկտեմբեր ամսին բանւորութիւնն ու գիւղացիութիւնն Իշխանութիւնն իւր ձեռքն առաւ, Բեք, վերացրեց կեռեկոյու Կառավարութիւնը: Խորհրդային Իշխանութիւնը սկզբից, թէպէտ վախժխելով, աշխատում էր այնպէս տանել գործը, որ միանգամայն վերջ տայ կապիտալիստներին, Ֆարբիկանտներին ու կալածատէրերին, որոնք ցարի ժամանակ շատ լաւ էին ապրում, ի հաշիւ գիւղացու և բանւորի թափած քրտնքի:

Բամբասողները մոռանում են, որ Խորհրդային Իշխանութիւնը չի մտածում հարուստի և նրա գրպանի մասին, այլ գիւղացու և բանւորի և միջոցներ է ձեռք առնում ազատել խեղճերին ձրիակիւր հատուտի լծից:

Այդ Իշխանութիւնը, որ Խորհրդային է կոչւում ահա թէ ինչո՞ւ:

Ինչպէս ասացինք, ցարը կառավարում էր երկիրը հարուստներից և պոմէշչիկներից ընտրած նահանգապետներով ու զանազան չինովնիկներով, որպէսզի ամեն ինչ հարուստների օգտին կատարէի:

Իսկ երբ հաստատեց Բանւոր Գիւղացիական Կառավարու-

2 0 0 1

թիւնը, նա հեռացրեց այդ հարուստներին և Իօխանուքիւնը յանձնեց բանուորին և գիւղացուն: Թող այսուհետև ինքը գիւղացին և բանուորն ընտրեն հաւատարիմ ընկերներ և յանձնեն իրաւունքը այդ ընտրեալ Բանուոր-Գիւղացիութեան Իշխանութեանը կառավարելու իրենց:

Իսկ իրենք ընտրեալներն էլ թող միասին հաւաքուին և գործը խորհրդակցութեամբ կատարեն:

Ահա գիւղացիներն և բանուորների ընտրեալների այդ ժողովը կոչուում է Խորհրդային:

Քաղաքում կհաւաքեն բանուորների ընտրեալները և կ'կազմեն Բանուորական պատգամաւորների Խորհուրդ:

Իսկ գաւառից, նահանգից, շրջանից ընտրեալ գիւղացիներն էլ կհաւաքեն և կ'կազմեն Գիւղացիական պատգամաւորների Խորհուրդ:

Կարմիր զինուորներից ընտրեալների ժողովն էլ կ'կոչուի Կարմիր զինուորների պատգամաւորների Խորհուրդ:

Եւ որովհետև բոլոր գործերը կառավարում են խորհուրդները և կառավարութիւնն էլ նրանց հետ միշտ խորհրդակցում է, ուստի և կոչուում է Խորհրդային Իօխանուքիւն:

Կառավարում են ոչ թէ մինիստրներն ու չինովնիկներն, այլ հեկեց բանուոր ժողովրդից ընտրեալները:

Այսպէս մենք տեսնում ենք, որ կառավարութեան մէջ տեղ չեն տալիս հարուստներին և նրանց չեն թողնում գործին մօտենալու: Հարուստի քէֆին զիպաւ, երբ նրան զրկեցին իշխանութիւնից, Փարբիկայից, և գործարանից:

Հիմա տեսնենք, թէ ինչպէ՞ս էին օգտուում հարուստները:

Գիւղացու հողն այնքան քիչ էր, ինչքան որ խեղճը վարում էր ու ցանում, էլի սոված էր մնում:

Իսկ կալածատէրն էլ այնքան հող ունէր, որ ձեւին շիւար

էր մնացել. ինքը մենակ մշակել չէր կարողանում, ուստի և տալիս էր գիւղացուն կապալով:

Կապալով վերցած հողն էլ գիւղացին հերկում, ցանում, շարչարում էր. իսկ երբ հնձի ժամանակն էր գալիս, կալածատէրը նրան տալիս էր շատ քիչ բաժինը:

Գործարաններում էլ Փարբիկանոսների գործն էր յաջող գնում:

Ամբողջ օրը աշխատող բանւորը և ինքը և ընտանիքը սոված էին մնում, որովհետև շատ քիչ վարձ էին տալիս: Քանի որ գործարանը և հողը բանուորի և գիւղացու ձեռքին չէր, այդ անարդարութիւնները միշտ լինում էին:

Խորհրդային Իշխանութիւնը աւել անիրաւութեան հետ չէր կարող հաշուել:

Նէնց որ Խորհրդային Իշխանութիւնը իշխանութիւնն իր ձեռքն առաւ, նա անմիջապէս ազատեց գիւղացուն կալածատիրոջ կապանքներից և ամբողջ հողը յանձնեց գիւղացուն:

Գործարանը և Փարբիկաններն էլ աւելցին բանուորներին:

Բայց այդ բոլորը միանգամից չկատարուեց: Մեծ Ռուսաստանի մէջ միանգամայն անհնար էր վերահանգնել կարգը և շատ մեծ ջանք էր հարկաւոր կապիտալիստներին և կալածատէրերին խոչնդումների դէմ կուսելու, որոնք ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում, ժողովրդին զուգուելու Խորհրդային Իշխանութեան դէմ:

Երբ այդ օրէնքը կրատուակեց, իսկոյն հարկաւոր եղաւ հաշի առնել, թէ որքան թանկարժէք իրեր կան եկղեցիներում և ինչպէ՞սի պաւակներն ու եկեղեցական անօթներ: Այդ բոլորի ցուցակները պէտք է կազմէին և ներկայացնէին Խորհրդային Իշխանութեան:

Իսկ Խորհրդային Իշխանութիւնը նոյն ցուցակներով եկեղեցական այդ բոլոր հարուստութիւնը յանձնում է ձեռքին սրա-

ւոսլաւ համայնքին, որ պարտաւորուեալ է հսկել և պահպանել այդ կայքը: Իսկ տաճարից օգտուել միայն իւր կրօնական պէտքերի համար—բայց ոչ դասախօսութիւններ կարգալու կամ դպրոց բանալու այնտեղ (միայն բացառիկ պայմաններում այդ կարելի է, եթէ կարևոր է):

Իսկ որ վանականների ձեռքից խլել են նրանց տունն ու կապիտալը այդ արւած է օրէնքի հիման վրայ:

Բայց անա թէ ի՞նչ էր կատարուեալ ցարի ժամանակ:

Ասենք թէ քաղաքում կար մի եկեղեցական տուն կամ հող, որ մեծ արդիւնք էր բերում, բոլորը մտնում էր վանականների զբաղմանը: Մենք գիտենք որ Խորհրդային Իշխանութիւնը բոլոր հարուստներից խլել էր նրանց տունն ու հողը, ուրեմն և չէր կարող այդ հողերականների համար բացառութիւն կազմել և թող տար, որ նրանք ձրիակերութեամբ ապրէին:

Եւ հէնց այդ բանն էլ սևազգեստներին դիւր չիկաւ:

Սրբերի պատկերները վերցնելու մասին էլ այդ վանականները սուտ են խօսում:

Մինչ դեռ Խորհրդային Իշխանութիւնը զործ չունի այն անձանց հետ, որոնք նրան չեն վնասում, թէկուզ երկնց տանը շատ էլ սրբի պատկեր ունեն:

Ոչ ոք տաճարների սրբոց պատկերներին ձեռք չի տուել:

Միայն օրէնքի մէջ աււած է, որ բոլոր կառավարչական հաստատութիւններից ու դպրոցներից հաւաքել այդ պատկերները: Ահա թէ ինչի համար:

Նախ որ աղօթել պէտք է տաճարում, և որ գլխաւորն է, չի կարելի սրբի պատկերը կախել այնպիսի վայրում, ուր մեծակ պրովոզաւ մարդիկ չեն նստած, այլ և ուրիշ զաւտանքի մտրդիկ էլ են լինում կամ յաճախում, որոնց համար այդ վիրաւորանք է, նրանք կասեն, որ պրաւաւաւանների համար ամեն ինչ

ուրեմն կարելի է: Եւ այդ բանից հաղար անսակ դժգոհութիւններ առաջ կգան:

Օրէնքն արգելում է դպրոցում կրօն դասաւանդելն:

Ով ուզում է երեխային կրօն սովորեցնել, թող այդ անէ տանը, ոչ ոք նրան չի արգելում:

Խորհրդային Իշխանութեանը մեղադրում են սրբոց մասունքները պղծելու մէջ:

Բայց գիտէ՞ք թէ ի՞նչ անիրաւ բաներ են արել այդ հողերականները:

Օրինակ—Նովոգորոդի նահանգում. «Իզվեստի» լրագրում գրած էր.

«Նովոգորոդի Իսպոլկոմի հրահանգի համաձայն՝ Նովոգորոդի երկաթուղադժի կայարանում,՝ ներկայութեամբ Խորհրդային Իշխանութեան ներկայացուցչի, հողերականութեան և հասարակութեան խումբն բաղմութեան, կատարեց սուրբ Դորոֆեայի մասունքների բացումը:

Մասունքների տեղ, լրթերի մէջ փութաթւած դասն ապտեկայի բամբակի մէջ կլորած մոմից մի տիկնիկ:

Ամբոխը կատաղած այդ խայտառակ խարէքայութիւնից, քիչ մնաց տեղն ու տեղը սպանէր վանքի վանահօրը հայր Ատեփան Վարդասունին:»

Այդպիսի խաբէքայութիւններ ամեն տեղ եղել են իսկ սևազգեստները մեղադրել են Խորհրդային Իշխանութեան, որ պղծում է մասունքները:

Խորհրդային Իշխանութիւնը արգելեց հողերականներին եկեղեցու դանդահարութիւններով ամբոխին հրաւիրելը, որպէսզի անկարգութիւններ չդատահեն և ժողովրդին չգոգուեն:

Իսկ այդ սևազգեստները յայտարարում էին, թէ զանդահարութիւնն արգելում է:

Ամենքս էլ լսում ենք զանդակներէ ձայնը ամեն օր, երբ

եկեղեցիներում արարողութիւն կայ և ոչ ոք էլ չի արգելում:  
Դեռ չեմ ասում ուրիշ քաղաքներում, միայն Մոսկւայում  
Չառիկի տօնին այդ սեպագեոսները երեք օր տնընդհատ այնքան  
են զանգահարում, կարծես թէ Կամարինսկի պարելիս լինեն:

### Հ Ո Ղ Ա Յ Ի Ն Խ Ն Գ Ի Բ Ը .

Շատ են խօսում նաև Խորհրդային Իշխանութեան միւս օրէնքների մասին:

Գիւղական ցեցերը ամենից շատ խօսում են Խորհրդային Իշխանութեան հրատարակած օրէնքի մասին, մինչ դեռ նրանք հասկացողութիւն չունեն, թէ ի՞նչ է ասում օրէնքը:

Հրատարակած են շատ օրէնքներ, և ամեն մէկը ասանձին տաանձին ցոյց է տալիս ով և ինչպէս պէտք է օգտւի հողից, ով հող պէտք է ունենայ և ուժից պէտք է խել:

Խորհրդային Իշխանութիւնը աշխատում է հողից օգտւելու այնպիսի պայմաններ ստեղծել, որ գիւղացին կարողանայ լաւ ապրել և ոչ թէ կալւածատէրն:

Հողային օրէնքը հրատարակւելու առաջին օրից առանց փողի խլեց կալւածատէրերի հողը:

Կերենսկու և բարժուպիայի կառավարութեան ժամանակ հողային հարցի մասին շատ էին խօսում. մտածում էին, թէ կալւածատէրին հողից զրկելիս, նրան փող տան, թէ ոչ, ինչպէս տանն, նրան չվերաւորեն չխլեն նրա հողը և կապիալը:

Մինչ դեռ Խորհրդային Իշխանութիւնը այդպիսիսի խօսքերին արժէք չաւեց: Ուղղակի յայտարարեց, ոողը պատկանում է միայն նրա մօակադին և հերկողին, և մի հարածով զրկեց կալւածատէրին հողից, առաւ հողը և յանձնեց հողային կօմիտեաներին բաժանելու նրանց, ով ինքը կմշակի:

Որպէսզի այգաեղ էլ հարուստները չօգտւեն և հողի շատ

բաժին չստանան, Խորհրդային Իշխանութիւնը հողարածանութեան և նրանից օգտւելու ձևի մասին առանձին հրահանգներ տուց:

Որոշեց հողը հաւասար բաժանել աշխատաւորի մէջ և տալ նրան այնքան հող, որքան հնարաւոր է ընտանիքը կերակրելու համար, միայն այն պայմանով, որ հողը սեփականութիւն չպիտի այլ միայն օգտւելու իրաւունքով:

Եւ այդ կարգադրութիւնն արեց ահա թէ ինչու համար:

Եթէ հողը տրւի մէկին սեփականութիւն, նա կարող է ծուլանալ և չմշակել և յետոյ էլ ծախել մի կարստի անարժէք գնով: Իսկ այդ բանը կուլակներին ձեռնառու է:

Նրանք ժամանակի ընթացքում կարող են նորից հողաբաժինները գնել և զրկել աշխատաւորին:

Կալւածատիրոջ հողը արդարացի բաժանելու համար Խորհրդային Իշխանութիւնը միջոցներ ձեռք առաւ:

Խօսքով հեշտ է ասել, որ հողը պէտք է տալ միայն աշխատաւորին, բայց զործնականապէս այդ բանն անելու համար շատ դժւար է:

Օրինակ—ինչպէս պէտք է անել. երբ ուրիշ նահանգներում իմանան, որ Սարատովի նահանգում հողը աւելի արդիւնաբեր է և մնալու է միայն տեղական ժողովրդին:

Խորհրդային Իշխանութիւնը այսպէս որոշեց, առաջ հողը տալ այն անհող անձանց, որոնք ապրելիս են եղել այդ նահանգում: Իսկ երբ աւելորդ հող կ'մնայ, կարելի եկւորներին, նախ նրանց, որոնք հողագործ են եղել և ապա հողագործութեամբ պարագել ցանկացողներին:

Պէտք է ասել, որ կալւածատէրերի բոլոր հողը չի բաժանւում, այլ մի մասը յանձնւում է խորհուրդներին մշակելու:

Ահա թէ ինչու:

Երբ հողը դեռ ևս կալւածատէրերին էր պատկանում, նրանք

անազիւն գումարներ ծախսելով այս կամ այն կտոր հողի վերայ տնկել էին այգիներ, ունէին օրինակելի տնտեսութիւն, պահում էին անասուններ, և աշխատում էին որքան կարելի է շատ օգտուել: Խորհրդային Իշխանութիւնը տեսնելով, որ հնարաւոր չէ այդպիսի մշակած հողամասերը մանր բաժիններ անել և ամենքին էլ չի հասնի, ուրեմն աւելի քնաս քան օգուտ տւած կլինի, ուստի այդ հողաբաժինը դարձեց կոոպերային:

Օրինակ— մի կով պահելը և նրանից կաթ ստանալը համեմատաբար աւելի թանգ կնստի, քան մի նախիրը, այդ պատճառով Խորհրդային Իշխանութիւնը կարևոր համարեց այդպիսի նախիրները օգտագործել բոլորի համար:

Համայնական կամ կոոմունա է կոչուում նրա համար, որ տնտեսութիւնը կատարւում է ամբողջ արտեղներէ միջոցով և միասին (ահա այդ ընդհանուր տնտեսութիւնը գիտութեան մէջ ասում են կոմունա): Բոլորը միասին աշխատում են, իսկ երբ հունձը հաւաքում են, նրանից օգտուում են բոլորը միասին և միատեղ:

Յայտնի բան է, որ մարդը, ինչքան էլ նա աշխատաւոր լինի, առանց ուրիշի օգնութեան շատ բան անել չի կարող: Բայց որտեղից օգնական գտնել, երբ ամենքն իրենց սեփական տնտեսութիւնն ունեն և նրանց էլ օգնական է հարկաւոր:

Ահա հէնց աշխատող ձեռքի պահասութեան պատճառով է, որ այժմ հունձը ոչնչանում է, մանաւանդ ներկայումս, երբ տարիներ տեղող պատերազմի ընթացքում շատ երիտասարդ և ուժեղ մարդիկ կոտորուեցին:

Ահա և մէկ ուրիշ գործ:

Ամենակատարելագործւած մեքենաները օգնութեան են գալիս հողը մշակելիս: Մակայն այդ մեքենաների համար հարկաւոր է ազատ և ընդարձակ հողաբաժին, որովհետև փոքրիկ տնտեսութեան համար այդ մեքենաները անպէտք են:

Իսկ եթէ մանր տնտեսութեամբ պարագողները միանան միասին և մեքենաները հարկաւոր կզան և գործն արագ կը կատարւի, այն ժամանակ հունձն առատ և միւս մթերքներն էլ շատ կստացւի: Եւ ինքը ցանողը կուշտ կլինի, դեռ մի բան էլ աւելի կմնայ, որ կիոխանակի ուրիշ ապրանքի հետ

Այդ ձևով գործարանի բանւորն էլ ապահով կգործի և հաց կուսենայ:

Այսպէս ուրեմն Խորհրդային Իշխանութիւնն ամեն բան անում է, և ոչինչ անուշադիր չի մնում: Հողի հետ միասին տալիս է նաև գործիքը:

### ՍԵՒԱԶԳԵՍՏՆԵՐԻՑ ՀԵՌՈՒ:

Այդ սեւազգեստ քահանաները ու վարդապետներն էլ ցարի ժամանակ լաւ էին ապրում ի հաշիւ խեղճ բանւորի, ամեն ինչ ուտում էին, ուտում, խմում էին և փող դիւղում:

Իշխանութիւնը զրկեց նրանց այդ վայելքից և և ազատեց ազգատին նրանց լծից:

Այդ բանը զուր չեկաւ սեւազգեստներին, և սկսեցին Խորհրդային Իշխանութեան դէմ կուել ամեն միջոցներով:

Սկսեցին բամբասել, որ Խորհրդային Իշխանութիւնը պրաւաւարմներին հետևում է, և չի թողնում հանգիստ ապրելու: Որ անասուած ժամանակի ենք յանդիպել, որ Իշխանութիւնը եկեղեցիները փակում է, աղօթք, թափօր, զանգահարութիւն արգելւում է, սրբոց մասունքները պղծում: Պատմում են Իվերսկու Ստաւածածնի պատկերը հանել են Մոսկւայի Կրեմլում եղած Մատուռից, արգելել են երկրպագել նրան և ոչնչացրել են սրբերի պատկերները:

Այդպիսի շատ դատարկ մեղադրանքներ փաթաթեցին Խորհրդային Իշխանութեան վզին:

Բայց տեսնենք, իսկապէս ինչպէս է եղել:

Սորհրդային Իշխանութիւնը մի օրէնք հրատարակեց. «Նկեղեցու բաժանոււմը պետութիւնից»:

Իսկ այս օրէնքը վանականներին դուր չեկաւ և նրանք սկսեցին ամեն յիմարութիւններ տարածել, ու ժողովրդին գրուգոսել:

Ամենքին էլ յայտնի է, որ Սորհրդային Իշխանութիւնը ոչ հետեւել է պրաւոսլաւներին և ոչ էլ նրանց դիպել:

Ահա թէ օրէնքի մէջ ի՞նչ է սոււած:

Ով ինչպէս ուզում է, քոյ Աստուծոյ հաւատաց: Ի՞նչ կրօնի ուզում ես եղիր, Սորհրդային Իշխանութիւնը քեզ չի նեղացնի: Կուզես եղիր պրաւոսլաւ, կամ մահմեդական, մալական, սեկտանտ և այլն ըս գործն է, քեզ ոչ որ ոչինչ չի ասի:

Բայց ցարի ժամանակ այդպէս չէր:

Հէնց հին դոկտորները ինչքան ասնջւեցին ցարի օրով, դեռ միւս այլազաւանների մասին չենք խօսում:

Դոկտորները, որ խաղաղ և հանգիստ ժողովուրդ էին, ցարի ժամանակ նրանց այնքան չարչարեցին, որ թողեցին հեռացան Ամերիկա:

Սորհրդային Իշխանութեան օրէնքի մեջ սոււած է, որ եկեղեցական կայքը պատկանում է ժողովրդին, որ պիտի կառավարէ խորհուրդը:

### ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ.

Այժմ տեսնենք, թէ ի՞նչն ստիպեց Սորհրդային Իշխանութեանը Կարմիր Բանակ կազմելու և ի՞նչպէս կարգ ու կանոն մտցրեց բանակի մէջ:

Երբ կառավարութեան գլուխն անցաւ Սորհրդային Իշխանութիւնը, առաջին գործն եղաւ ցարի ժամանակ սկսած ժողո-

վրդի և բանուրի համար մահացու այդ պատերազմին անմիջապէս վերջ տալ:

Հէնց որ Բոլշեկներն սկսեցին կառավարել, նրանք անմիջապէս դադարեցրին պատերազմը գերմանացիների հետ և էլ ուշադրութիւն չդարձրին, որ Գերմանիայի թաղաւորը կամ մինիստրը կարող են մինչև իսկ կողոպտել ամբողջ Ռուսաստանը:

Սորհրդային Իշխանութիւնը համաձայնեց ամեն տեսակի ծանր պայմաններ ընդունելու, միայն թէ վերջ տրւի այդ արեւնահեղ պատերազմին և հնարաւոր լինի ներքին գործերով պարսպելու:

Ահա թէ ինչու:

Սորհրդային Իշխանութիւնը հաստատ գիտէր, որ ինչպէս ուուս, այնպէս էլ Գերմանիայի ժողովուրդը դժգոհ էր պատերազմից, որ նրանց տարիներ շարունակ քայքայել էր:

Առանց այն էլ, սպասուում էր, որ ցար Նիկոլայի նման, գերմանական թաղաւորն էլ շուտով կ'նգնի գահից: Եւ այդպէս էլ եղաւ:

Մի տարի չանցաւ յեղափոխութիւն սկսեց Աւստրիայում և Գրմաոիայում և թաղաւորը փախաւ Գերմանիայից:

Թէպէտ սկզբում կառակարութեան ղեկը Գերմանիայի բուրժուազիայի ու նրա արքանակներին ձեռքն անցաւ, բայց և այնպէս Սորհրդային Իշխանութիւնը յետագայում մերժեց կատարելու Գերմանական թաղաւորին տուած պայմանագրի պահանջները: Ինչքան էլ Սորհրդային Իշխանութեան համար հաշտութեան պայմանները ծանր լինէին, միևնոյն էր պէտք էր վերջ տալ այդ պատերազմին:

Մինչ դեռ միւս երկրներում կառավարութիւնը հարուստների և նրանց արքանիակների ձեռքը լինելով, համաձայն չէին դադարեցնելու պատերազմը:

Սորհրդային Իշխանութիւնը որոշեց արձակել հին բանակը

և ապա իւր և երկրի պաշտպանութեան համար կազմեց նոր բանակ, որի մէջ մտան կամաւորներ և լաւ սովորով:

Մինչ դեռ այդ բանը գուր չեկաւ Փարբիկանտներին ու կալաճատէրին և հին գեներալներին, որոնք սկսեցին Սորհրդային Իշխանութեան օտի տակը փորել:

Ամեն կողմից նրանք յարձակումներ սկսեցին, շատացրին իրենց կողմնակիցները թիւը:

Ո՞ւմ յայտնի չէ, որ թաղաւորի այդ ծառաները գոգոնցին Սիրիբում եղած չեխներին և յարձակեցին մեզ վերայ, քիչ էր մնում բոլորիս սովից կոտորէին:

Գործն աւելի վատացաւ, երբ այդ անիրաւունքին օգնութեան հասան Ֆրանսիացիք, Անգլիացիք և Նապոնացիք որովհետեւ օտար կապիտալիստները վախեցան, որ սուսներից օրինակ կառնեն և իրենց ժողովուրդը:

Թէպէտ Սորհրդային Իշխանութիւնը ցանկանում էր հաշտ ազրել օտարների հետ և իւր երկրի ներքին գործերը կարգի բերել, սակայն նրան հանգիստ չթողին թշնամիները, որոնք ունէին և գորք և ուզումսերը:

Այդ պայմաններում Սորհրդային Իշխանութիւնն ստիպւած եղաւ իւր զինւորական ոյժը շատացնելու:

Որպէսզի հնարաւոր լինէր պաշտպանելու Բանուր գիւղացիական կառավարութիւնը, հրատարակեց մի օրէնք, որով Կարմիր Բանակի մեջ կարող են ծառայել միայն աւխասաւուր գիւղացիութիւնն ու բանուրութիւնը, որի համար միայն աշխատում է Սորհրդային Իշխանութիւնը:

Վտանգաւոր և թշնամի կապիտալիստներն ու բուրժուաներն իրաւունք չունեն մտնել զինւորական շարքերը: Նրանց հաւաքում էին միայն կազարմաները մաքրելու, պահպանելու պահեստները և ուրիշ այլ աշխատանքներ կատարելու:

Ո՞ւմ յայտնի չէ, որ ցարը ժամանակ մեր զինւորները ի-

րաւունքներից զրկւած ճորտեր էին և ազատ խօսքն արդելու էր:

Իսկ այժմ կարմիր Զինւորը կատարեալ ազատ է, նա միայն հպատակում է իւր կամանդիրին ծառայութեան ժամերին:

Զինւորները մինչև իսկ իրանց ներկայացուցիչներն ունեն բոլոր գործերի ղեկավար խորհուրդների մէջ և ստանում են 300 բուրքի ամսական սոճիկ ամեն ինչ պատրաստի:

Որպէսզի զինւորների ազատ ժամերն իզուր չանցնեն, նրանց համար կազմում են դասախօսութիւններ, համերգ, թատրոն և այլն:

Զինւորների պարէնն էլ աւելի շատ է և մաքուր: Սորհրդային Իշխանութիւնը՝ բացի զինւորներից, օգնում է և նրանց ընտանիքներին, սպանւած զինւորի ընտանիքն ստանում է մի անգամից մի քանի հազար բուրքի նպաստ, իսկ եթէ նա կենդանի է, ընտանիքն ամսական որոշ գումար է ստանում:

Հաշմանդամ զինւորին անխնամ չեն թողնում, նրան նպաստ և գործ են տալիս, արհեստական ոտք կամ ձեռք են շինում ճրի:

Այդ բոլորի համար միլիտար (հազար միլիոն) փող է ծախսում, և այդպիսի գործի համար փող չեն խնայում:

Եթէ գիւղացիներից մէկին տանում են պատերազմ, հարեւանները պարտաւորում են վարել, ցանել և հաւաքել նրա հունձը:

Սորհրդային Իշխանութիւնը միշտ ուշադիր է, որ գիւղացի զինւորները ընտանիքներն անխնամ չմնան:

### ԲԱՆՒՈՐԻ ԶԱՀԵՐԸ ՊԱՂՏՊԱՆՈՂ ՕՐԷՆՔՆԵՐ.

Սորհրդային Իշխանութիւնը չի մոռացել բանւորին: Մշակւած և հրատարակւած են այնպիսի օրէնքներ, որով կարգի է բերւում իւրաքանչիւր գործարան և Փարբիկա բանւորի կեանքը բարեկեցիկ դարձնելու համար:

Այդ բոլոր օրէնքները հաւաքուած են միասին և կոչուում են „աւխասանքի կողեկս“ (հաւաքացու և վերամշակութիւն անցեալի օրէնքներէ)։

Այժմ տեսնենք, թէ այդ հաւաքուած օրէնքների գրքի հիման վրայ իրչպէս են կարգի բերում և բարելաւում բանւորի կեանքը։

Առաջին գործն եղաւ հաստատել ուր ժամւայ աշխատանք, որպէս զի բանւորն անընդհատ աշխատելուց չյոգնի և գործելու ընդունակութիւնից չըկեր։

Ճարի ժամանակ Փարբիկանտներն ստիպում էին բանւորներին այնքան աշխատել, որքան գործատէրերին հարկաւոր է։ Թէպէտ բանւորի բարեկեցութեան համար օրէնքներ կային, սակայն նրանք չէին գործադրում և բանւորը ստիպուած էր ամբողջ օրը գործելու։

Այժմ, Խորհրդային Իշխանութեան օրով բանւորին տանջել չի կարելի։

Միայն բացառիկ պայմաններում, երբ հարկաւոր է անհրաժեշտ և շատապ գործ անելու կամ մեքենան կարգի բերելու, բանւորը 8 ժամից աւելի է աշխատում։

Բայց այդ աւելորդ աշխատած ժամերի համար նրանք վարձատրում են։

Եթէ բանւորը մի շաբաթ ամեն օր 8 ժամ աշխատում է, եօթերորդ օրը հանգստանում է։ Ահա հէնց այդ պատճառով որոշուած է ամեն շաբաթւայ մէջ 42 ժամ ազատ լինի գործից։

Բանւորի հանգստութեան օրը կիւրակին է. իսկ եթէ որնէ գործարանում այդ օրն անհրաժեշտ է աշխատել, բանւորն իրաւունք ունի շաբաթւայ որևէ օրն ընտրել հանգստանալու։

Խորհրդային Իշխանութիւնը կրճատել է տօները և եթէ երկար մտածենք, կը տեսնենք, որ շատ լաւ է արել։

Միւս երկրներում շատ վաղուց է, որ կրճատել են տօն օրերը, որովհետև գործ անելու համար շատ քիչ ժամանակ էր մնում։

Խորհրդային Իշխանութիւնն աւելի լաւ համարեց տարւայ տօների թիւը կրճատել, իսկ դրա փոխարէն բանւորին ազատեց ամբողջ օրը տանջելուց, որը և առողջութեան և գործի համար լաւ է։

Այնքան շատ տօներ են եղել, և եթէ չկրճատէինք, բանւորը չէր կարող յիշել այն տօները, որ նրա կեանքին է վերաբերում։

Օրինակ. պէտք է յիշել նոյեմբերի 25-ը (նոր թւով—նոյեմբերի 7), երբ բուսուրն ու գիւղացին իրանց ձեռքն առան իշխանութիւնը և ազատեցին ճորտութիւնից։

Մայիսի 1-ը աշխարհի բոլոր բանւորները Տօնում են այդ օրը, որ նշան այն էր, որ նա մտնում է կապիտալիստի դեմ ազատ օրնելու համար։

Արտաստեճանի բանւորներն տնգամ, որ զուրկ են իշխանութիւնից, մայիսի մէկը տօնում են։

Խորհրդային Ռուսաստանի համար մայիսի 1-ը մեծ հանդիսով լրիտի կատարելի որովհետև իշխանութիւնը բանւորների և գիւղացու ձեռքն է։

Օրէնքով արգելում է երեխաներին գործի դնել. նախ որ այդպիսի աշխատանքը մանկան առողջութեանն է վնաս և երկրորդ, նրան կը դժկեն ուսումից։

Խորհրդային Իշխանութիւնն աղանդից բանւորի կեանքը հիւանդութեան և ծերութեան օրերին։

Երբ բանւորը աշխատանքի անընդունակ է դառնում, նրան նշանակում են ակնախնայ այնքան, որքան հարկաւոր է ապրուստի համար։

Իրենք բանւորները հսկում են, թէ որտեղ ինչ աշխատանք է կատարում և կանոնաւոր է ապրում արդեօք այդ գաբժը, որ պէտքի չաղդի բանւորի առողջութեան վերայ։

Աշխատանքի վարձատրութիւնը լիմա լաւ է. թէպէտ թան-

1006  
1929

կութիւնն օրէ օր այնպէս բարձրանում է, որ դժւար է ոտճիկի չափը ,արմարեցնել թանկութեան:

Բայց և այնպէս այդ բանի առաջ էլ կանգ չի առնում Սորհրդային Իշխանութիւնը և աշխատում է շարունակ աւելացնել ոտճիկները:

Եթէ Սորհրդային Իշխանութիւնը չունենար այդքան թըշնամիներ , որոնց ձեռքին է գտնուում դեռ ևս շատ գործարաններ ու ֆաբրիկաներ, հացն ու քարածուխը և ուրիշ այլ անհրաժեշտ բաներ, գործն աւելի լաւ կը դնէր:

Փշխանակ ոտճիկը շատացնելու, իւրաքանչիւրին բաժանւէր այն ապրանքը, ինչ որ նրա ապրուստի համար հարկաւոր էր:

Իսկ այժմ տեսնում ես, կամ այս չկայ, կամ այն, բայց մեղադրում են Սորհրդային Իշխանութեանը:

Պէտք է խոստովանել, եթէ այդ պայմաններում Սորհրդային Իշխանութիւնը չլինէր, բանւորը սովից կը մեռնէր: Հարուստները կը հաւաքէին մնացած ապրանքը, և բանւորը չէր ունենայ ոչ հաց, ոչ հագուստ, ոչ տանաւան:

Այժմ Սորհրդային Իշխանութիւնը թէպէտ սոսիստիալ և հաշուով է բաժանում ամեն ինչ, բայց առաջին հերթին բաւակտնութիւն է տալիս բանւորին:

Եթէ ուտելու շատ պաշար լինէր, եթէ մեր թշնամիները մեզ չխանգարէին, ամեն ինչ շատ կը լինէր և բանւորի համար ոչ մի բան պակաս չէր լինի:

Բանւորն ինքը կաշխատէր և ինքն էլ իւր աշխատանքի պտուղներից կօգտւէր:

Այժմ պէտք է իմանաք, որ գործարաններն ու ֆաբրիկաներն դառնում են բանւորների ձեռքին և կառավարւում են բանւորական կոմիտէներով:

Գուցէ մէկն ու մէկն այսպէս կը մտածի, լաւ չի լինի, որ հէնց միանգամից գործարանները տանք բանւորներին, և ով որ-

տեղ աշխատում է՝ նրա տէրը լինի: Եւ ինչ գործ լինի, միասին խորհրդակցեն ու կատարեն:

Սա շատ վատ հետեանքներ կունենար: Ինչպէս կարելի է հաւասար բաժանել բոլոր գործարանները բանւորների մէջ. չէ որ մի գործարան կարող է շատ հարուստ լինել, լաւ մեքենաներ ունենալ, իսկ միւսը ոչ. առաջ կը գայ մեծ անհաւասարութիւն:

Ահա այդ պատճառով էլ Սորհրդային Իշխանութիւնն իւր ձեռքն առաւ բոլոր գործարանները, նրանցից ստացած ապրանքներն էլ պէտք է մնան կառավարութեանը:

Կառավարութիւնն այնուհետև ինքը պիտի բաժանի ապրանքը. ամենից առաջ բաժին է հանում բանւորներին, իսկ յետոյ ինչ որ կը մնայ, անգործներին կը տայ:

Եթէ հնարաւոր լինի, ամեն բանից առատ առատ բաժին կը դրի: Բայց այժմ այդ անել չի կարելի, որովհետև ապրանք չկա:

Այժմ արդէն երկար չի տևելու պաշարի քչութիւնը: Կուշակին ջարդել ենք և հերթը հասել է Դենիկինին:

Մի քանի խօսք էլ բանւորների բնակարաններին մասին:

Ամենքին էլ յայտնի է, որ բանւորների բնակարաններն եղել են մութ, խոնաւ, վատ և առողջութեան համար վնասակար: Մեծ մասամբ խեղճ բանւորն ապրել է գետնայարկ ցած նկուղներում (պաղաւանքում) և չարդախի տակ: Այդ մասին ցարի կառավարութիւնը չէր էլ մտածում: Նրանք հողա էին տանում աւելի շուտ հարուստին լաւ պահելու, որոնց համար, ուրիշ տեղերից ջրանցքներով ջուր էին բերում, էլեքտրականութիւն էին անցկացնում, փողոցները քարում էին և մայթեր (տրոստաւորներ) շինում, որ հարուստները ցեխի մէջ չընկնեն: Իսկ այն փողոցները, ուր բանւորներն են ապրել, չեն քարել, և հէնց որ անձրև էր գալիս, խեղճ բանւորն անում էր ցեխի մէջ թաղած: Այդ բոլորն անում էին գործի գլուխ կանգնած կապիտալիստ-

ները, վաճառականներն ու ֆարրիկանտները, որոնք միայն իրենց մասին էին մտածում:

Իսկ այժմ այդպէս չէ.

Խորհրդային Իշխանութեան որոշմամբ բոլոր լաւ և գեղեցիկ տները դատարկեցին, բնակւողներին դուրս բերին և նրանց տեղ բնակեցրին բանւորներին, որոնց տեղն և զանազան անհրաժեշտ տան մէջ, սեղան, աթոռ և այլն:

### ԱՌԵՒՏՈՒՐ ԵՒ ԱՊՐԱՆՔՆԵՐ.

Այժմ տեսնենք ինչո՞ւ են յարձակւում Խորհրդային Իշխանութեան վրայ վաճառականներն ու տնտեսները:

Շատ պարզ է.

Վաճառականներն այն օրից, երբ զրկւեցին ժողովրդի հաշւին հարստանալու հնարաւորութիւնից, սկսեցին մեղադրել Խորհրդային Իշխանութեանը:

Յայտնի է, որ այդ արիւնայեղ և երկարատև պատերազմների ընթացքում, քանի գնաց տղրքանքը պակասեց, իսկ մնացածն էլ վաճառականներն այնքան թանկացրին, որ առնելն անհնար էր: Ով հորուստ էր, փող շատ ունէր և չգիտէր, թէ ի՞նչ անի փողը, նրան ինչ, ամեն բան առնում էր:

Ահա այդ բանի գե՞մ կուեղու համար Խորհրդային Իշխանութիւնը օրէնք հրատարակեց, որով արգելեց վաճառականներին գրողանները հատապցնելու:

Կառավարութիւնը որոշեց իւր ձեռքն առնել ամբողջ առևտուրը, գլխաւորապէս այնպիսի խանութներ, ուր ծախում էին մանուֆակտուրա (կտորեղէն, չիթ և այլն) կօշիկ, որին ժողովուրդը մեծ կարեք ունէր:

Եւ որովհետև տղրքանքը շատ քիչ էր, ուստի որոշեց եղածը բաժանել միայն սոմսերով, ի հարկէ նախ պէտք է բանւորն

ստանայ, իսկ ով չի աշխատում, նա կարող է պատահել, որ չի՞նչ չստանայ:

Իհարկէ, այդ բանը դիւր չէր գայ ոչ սակուղիանտին (շահագործողին), ոչ հարստին և ոչ էլ վաշխառուին:

Բայց գեւ բոլոր խանութներն խորհրդներին չի պատկանում, իսկ եթէ այդ կը լինի, ապրանքն աւելի կէժանանայ:

Վերաւորած են նաև տանտէրերը: Նրոնց տները ձեռքից խլեցին և կառավարելու իրաւունքը յանձնեցին Խորհուրդներին: որոնց օգնելու համար տնւորներն ընտրում են անային Կոմիտէներ: Ահա այդ միջոցով հնարաւոր եղաւ ազատել տնտեսիբոջ լծից:

### ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆՅ ՄԱՍԻՆ.

Հարուստը անբաւական է. տեսնենք թէ ինչի համար:

Առաջ անա թէ ի՞նչպիսի կանոններ կային.

Մէկը հարստութիւն է դիզում, իսկ մեծնդլիս իւր կարողութիւնը թողնում է ժառանգներին. որոնք պատրաստի փող ստանալով, բոլորովին դործ չեն անում: Եւ ինչո՞ւ պէտք է աշխատի, երբ իրենց օգրուստի համար հայրական փողը բաւական է:

Իսկ այժմ Խորհրդային Իշխանութեան օրէնքով ոչ ոք իրաւունք չունի անգործ ման գալ և ուրիշի հաշուով ապրել կամ ուրիշին աշխատեցնել իւր օգտին:

Եւ որպէսզի ամենքն էլ աշխատելու դիմեն, կարգադրւած է, որ ծառայութեամբ կարողութիւն կսակել չի կարելի:

Այսուհետև հէնց որ հարուստը մեծնի, նրա ամբողջ կարողութիւնը պէտք է մնայ Խորհրդային Իշխանութեանը:

Միայն այն մարդիկ, որոնց կարողութիւնը 10 հազար բուբուց աւելի չէ, իրաւունք ունեն իրենց ունեցածը թողնել իւր ընտանիքին մահից յետոյ:

### ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԻՒՆ ԺԺՈՂ ՍՏՐԴԵՐԸ.

Սորհրդային Իշխանութեան թշնամիները, իբր թէ սիրելով իրենց հայրենիքը, վերևում խօսած մեր բոլոր հարցերի մասին ամեն տեսակ բամբասանքներ տարածել են ժողովրդի մէջ:

Բայց նրանք ոչ մի խօսք չստեղծեցին հետևեալ բաների մասին:

Ցարը ժողովրդին պահում էր խաւարի մէջ:

Հասարակ գրել կարգալ ամենքին չէին սովորեցնում:

Ռուսաստանի ժողովրդի կեռից աւելին անգրագէտ էր:

Մէկին քիչ սովորեցնում էին, իսկ միւսն էլ սովորածը մոռանում էր:

Այժմ արդէն ուսումը պարտադիր է:

Բոլոր երեխաներն էլ պէտք է ուսում առնեն:

Ամենքն էլ կարող են համալսարան և զիննադիա մտնել առանց փողի: Սորհրդային Իշխանութիւնը մինչև անգամ գիւղքն ու դասական այլ պիտոյքները ձրի է բաժանում:

Ամեն մարդ այժմ ազատ կարող է զիտութիւն և ուսում առնել:

Մինչ զեռ միւս երկրներում զեռ ևս այդպիսի ազատութիւն չկայ:

Ուրբեմն, եթէ ամեն մարդ կրթութիւն, ուսում է ստանում, նա էլ շատ կը հասկանայ, թէ ներկայումս ինչպէս պէտք է լաւ դնի իւր գործը:

### ՄԱՆԿԱՆՑ ԽՆՍՄԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ.

Սորհրդային Իշխանութիւնը մտածում է մանուկների մասին:

Գիտէք, որ ուտելու պաշարը շատ քիչ է, բայց էլի Սորհրդային Իշխանութիւնը հող տարաւ մանուկների մասին և նրանց համար նոր օրէնք հրատարակեց:

Երեխաներին ձրի նաւ տալ եւ բաց բողմել ձրի ամեն տեսակի ուտելիքներ:

Եթէ երեխաների մասին փողքից չմտածենք, չէ որ նրանք, որ մեծանան, կը լինեն աւելի հիւանդոտ և թոյլ բանուորներ:

### ԳԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ.

Մի քանի խօսք էլ ստենք դատարանի մասին:

Մենք տեսանք, թէ ինչքան լաւ բաներ է արել Սորհրդային Իշխանութիւնը.

Յայտնի է, որ ցարի ժամանակ դատարաններում գործ և արդարութիւնն այնպէս էին տանում, ինչպէս նրանց հրամայում էին:

Շատ անգամ անմեղ մարդիկ դատապարտւում էին:

Այժմ դատարանը ժողովրդական է: Այդտեղ գործը վճռւում է այն դատաւորներով և նախագահով, որոնց ուղարկում է ինքը Սորհուրդը, Գատարանի նախագահ լինելու համար հարկաւոր չէ հարուստ լինես:

Հարուստներն այդ պատւից զրկւած են:

Օրէնքում որոշ սոււած է, ինչպէս պէտք է վարել գործը, որ ամեն անարդարութիւն վերանայ:

### ԳՍԱԿ ԵՒ ԱՊԱՀԱՐԱՋԱՆ.

Մէկ ուրիշ կարևոր օրէնք էլ կայ, որի մէջ սոււած է, թէ ինչպէս պէտք է պոսակել և ինչպէս պէտք է ծնւածների ու մեռածների անունները մտցնել չափաբերականների մէջ:

Ապահօրազանի համար էլ սոււած է, թէ ինչպէս պէտք է բաժանւած ծնողները խնամք տանեն երեխաներին և նրանց զաւակներն էլ փոխադարձաբար ծնողներին պիտի օգնեն:

Մինչ զեռ այս մասին Սորհրդային Իշխանութեան թշնամիները բամբասում էին, որ պոսակը արգելի են, և ահա թէ ինչն էր դրա պատճառը. Օրէնքում սոււած է, ուզում ևս մտիք եկեղեցի պոսակիւր, ոչ ոք քեզ չի արգելում: Բայց որպէսզի ապացուցես, որ զու իսկապէս պոսակւած ևս և դրա համար փառ-

տաթղթեր ունենաս, դու պէտք է դիմես Խորհրդային Իշխանութեան, թէ չէ եկեղեցական պատկը բաւական չէ:

Իսկ ով ցանկանում է պահուել առանց քահանայի կարելի է:

Խորհրդային Իշխանութիւնը կտայ քեզ մի վկայական, որ դու պահուեցիր և գրանով էլ գործը կը վերջանայ և պատկը օրինաւոր կը համարւի:

Միևնոյն բանը ապահարազանի վերաբերելով:

Եթէ ամուսինները միասին ապրել չեն կարողանում, պէտք է դիմեն Խորհրդային Իշխանութեան, որն անմիջապէս որոշում է, թէ ով ում պէտք է օգնի և երէխաներին ով պիտի պահի:

Այգպիտով ամեն ինչ շատ հեշտ կը լինի և ոչ ոք չի ստիպի սկամայից կնոջ հետ կամ մարդու հետ ապրելու:

Միշտ կարելի է բաժանուել և ապահարազան տալ, երբ համայնութիւն չկայ:

Բանուորներ եւ գիւղացիներ, ամուսյանեցիկ Խորհրդային Իշխանութիւնը:

Մենք տեսնք, թէ ինչքան լաւ բաներ է արել Խորհրդային Իշխանութիւնը և էլի շատ բան ունի աչելու:

Մեր գործը կը վերջացնենք միայն այն ժամանակ, երբ կը շարգենք մեր թշնամիներին:

Այդ բանը թող բոլորն էլ մտքումը պահեն և ամեն բանով օգնութեան գան Խորհրդային Իշխանութեան:

Չէ որ այդ Իշխանութիւնը բանուորական և գիւղացիական է:

Եթէ մենք այժմ մեր կառավարութիւնը կորցնենք, կոչընչանայ ամբողջ պետական դազմը և ամեն բանից կը զրկուենք. Աւելի վատ կը լինի, երբ նորից կը վերադառնան կապիտալիստն ու կաւածատէրը և նորից հին կարգերը կը վերականգնի:

Իսկ թէ նրանք ինչպիսի կարգեր կը մտցնեն, մեզ արդէն յայտնի է: Նրանք իրենց ֆրասները կը հանեն բանուորի ջանից:

Եւ որպէսզի այդպէս չլինի, հարկաւոր է ամեն բանով օգնել Խորհրդային Իշխանութեանը, որ կարողանայ իւր գործի յաջողութեամբ առաջ քանել:

2013

« Ազգային գրադարան



NL0038987

295

